

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 բուր, կէս տարվանը 6 բուր:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարազգաբաշխը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелік»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

Յուլիի 30-ին

Դրամական և առևտրական ընդհանուր տաղ-
նապը, ներկայումս, ինչպէս ամբողջ կովկասում,
նորոգել և մեր կողմերում, տարածել է իր սար-
սափեցնող թեւերը. եթէ որ մի տարի էլ չարու-
նակ այսպէս տեւէ, այն ժամանակ կովկասում
և ընդհանրապէս կատարեալ աղքատութիւն կը տե-
ւայնէ: Եթէ տնտեսապէս, թէ բարոյապէս և թէ մը-
տաւարապէս. իսկ այդ բոլորի հետեանքը, իմ կար-
ծիքով՝ պիտի լինի ժողովրդեան բարոյական ան-
կում և թուլութիւն: Այժմ մեզ մնում է անյա-
պաղ որոնել բոլորի վերականգնող արմատական
միջոցները ազգերի պատահած սոցիալական անց-
քերի մէջ, որոնք տեղի են ունեցել անցեալինե-
րում: Եթէ շատ հեռու չը գնանք և իրար պատ-
մութեան հաստադիր հատորները չը քրքրենք բա-
ականանալով մեր ամենօրեայ փորձական ղեպ-
քով և մեր առողջ մտքով հետախուզենք, կը
տեսնենք որ սոցա բոլորի ճարը և դարմանը ժա-
մանակակից գիտ ու լինելուն և բնին են. մենք զի-
տութիւն ասելով՝ միայն գրեւ-լի արդար էր սը-
խալ ենք ըմբռնում: Այլ, գրեւ-կարգաւ հետ
պէտք է սկսենք և՛ արհեստագիտ ու լինելուն
և՛ գիտարուեստը, որոնցով կը կարողա-
նանք մեր բոլոր կենսական պիտոյքները կա-
նոնաւոր և արդիւնաւոր կերպով պատրաստել,
կարճ ասել, հետեանքը կը լինի այն, որ մեր մէջ
ձեռքից վերցրածը միւս ձեռքին կը արվի, հետե-
ապէս մեր երկրի տուածը մենք կը մշակենք և
կը պատրաստենք մեզ համար: Մենք կարծում
ենք, որ միայն քաղաքներում է տիրում դեա-
մական և առևտրական կրիպիւր. ոչ, նոյն իսկ
մեր ամենաբարեբեր աւաններում ու գիւղերում
մի և նոյնն է: Բայց եթէ փոքր ինչ տնտեսական
և գիտող աչքերով մեր շուրջը նայենք, կը տես-
նենք, որ այն գիւղերում, որտեղ որ երկրագոր-

ծութիւնը և մի քանի նահապետական արհեստ-
ներ աւելի ծաղկեալ դրութեան մէջ են, այն գիւ-
ղերի բնակիչների կեանքը աւելի ապահովված է
զանազան պատահանքներից:
Մշակ-երկրագործ դասի կեանքը ապահովացնե-
լը և նրա կեանքի մէջ բարգաւաճ միջոցներ մըտ-
ցնելը, մի և նոյն է թէ մեր, այսինքն՝ քաղաքի
բնակիչների կեանքը ապահովացնել: Մի գուցէ ըն-
թերցողը կասկածէ և բողբոջում ուրիշ տեսակ
հասկանայ ինձ, այսինքն՝ իբր թէ ես բողբոջում
ուրանում եմ գրադրութեան անմիջական և ան-
յետաձգելի հարկաւորութիւնը. քան լիցի՝ մէկը
առանց միւսի կիսում է իր տալիքը և պտուղնե-
րը, որովհետեւ մէկը ծնեցնում է, իսկ միւսը այդ
բողբոջում աւելի ապահով և արգասաւոր վի-
ճակի մէջ է ձգում: Եթէ այսօր մենք ունենք
տարրական և միջնակարգ ուսումնարաններ և
չեն տալիս այն սպասելի օգուտները և պտուղ-
ները, մենք իսկ ենք մեղաւոր: Նոյն իսկ Յիբե-
լայի հարուստ և բարեբեր երկրածին միջոցները
նպաստում են մեզ մեր կեանքը ամենաապահով
վիճակի մէջ ձգելու, ինչպէս նոյն իսկ մենք մե-
ղանում ենք թէ մեր անձի և թէ բնութեան
ղեմ, անօգուտ թողնելով երկրի կենսական հարս-
տութիւնները բնութեան տարրերի անյաղ որո-
վայնի մէջ իսպառ ոչնչութեան ծառայելու: Այս
բոլոր գիտումները չեմ անում միայն մեր ուսում-
նարանների համար, այլ և մեզ չընկալող օտար
ազգաց ուսումնարանների համար: Ես չեմ պա-
հանջում, որ մեր բոլոր ուսումնարաններում մըտ-
ցովն այնպիսի արհեստներ, այնպիսի մեքենա-
ներից առ կախեալ, որոնք վեր լինեն մեր մտա-
ւոր և տնտեսական ուժերից, չեմ ասում ֆիզիկա-
կանը: Ուսումնարանում գրադրութիւնը անցնե-
լուց յետոյ, մուծանելի արհեստը պիտի յարմար-
վի տեղական երկրի հարստութիւններին և ուս-
ման ծրագրի մի մասը բողբոջում յարմարեցրած
պիտի լինի աւանդելի արհեստում: Այժմ ա-
ռաջ էլ ունենանք, որ մենք, միայն քաղաքա-
ցիքս չենք այդ բոլոր սկզբունքների պաշտո-
ղը և մեծամասնութիւնը, այլ նա, այսինքն
այն դասը, որի համար և պէտք են մեր փա-
փագիլի արհեստները: Գուցէ շատերն ասեն
թէ միթէ այսօր չը կան այդ ձեռք երազած ար-
հեստները: Այո, կան, բայց վայ այն լինելուն.
թէ ինչպէս եմ վայն տալիս, որ խօսքս չերկա-
րացնեմ, ցանկալի է, ընթերցող, որ ձեռք մէկ կող-

մը կանգնած բանելիս լինի կատարելագործված
արհեստաւորը, իսկ միւս կողմը թերակատարը:
Մենք մինչև օրս չը նախատեսելով մեր երկրի աչ-
քին զարնող ամենախոշոր օգուտները և չը նը-
կատելով մեր երկրի հարստութիւնները, կը Նո-
բէլ և այլ օտարազգիները եկան և սկսեցին մեր
աչքի առաջ մեր երկրից անազին օգուտներ
ստանալ, այն ժամանակ իսկոյն սկսեցինք ան-
ընդհատ զանգատվել և ձիւեր արձակել վե-
րայիշեալների դէմ, որ արդէն ուշ էր օտարին դի-
մադրելու: Այն ինչ կանգնեցին էլի միջանի տարի-
ներ և մենք անպատրաստ լինելով դիմադրելու
այդպիսի օտարականի կատարելագործված և
արհեստագիտական ոյժերին, առաւել ևս կը վառ-
վարանայ մեր ազգայն վիճակը:
Յաւոք արտի պիտի նկատել, որ մեր մէջ կայ
ղեւ էլի մի մեծ պակասութիւն ևս. թէ անցեա-
լում և թէ ներկայումս մտել է մեր մէջ միա-
կողմանի ձգտում ղեպի դիտութիւնը: Մինչև վաթ-
սունական թվականները մեր ուսումը աւարտող
երիտասարդութիւնը աւելի ձգտելի է եղել դէ-
պի վերադարձութիւնը և մասամբ հողորակա-
նութիւնը, իսկ ներկայումս—ղեպի բժշկականու-
թիւնը, օրէնսդրութիւնը և ուսուցչութիւնը,
կամ այսպէս ասած մանկավարժութիւնը: Իսկ
տեխնիկական դժբաղդաւոր հայ տարրից բոլոր-
վիւն առված է կամ անուշադիր է թողված: Գիւ-
նադիմանքում աւարտող հայ պատանիների
շատ քիչ 0/100 ձգտում է դիտութեան այդ ճիւղին,
իսկ Ներսիսեան դպրանոցում և Գեորգիան ձեռա-
րանում աւարտողները ինչ իսպառ մուծացել են
այդ դիտութիւնը: Ուզում եմ ասել, որ բնաւ-
կանութիւնը ղեւ մեզ համար խորթ է. վերջապէս
ժամանակ է, որ մեր ուսումնարանները դրա ան-
թիւ օգուտները ևս հասկանան:

Ասում ենք փող չը կայ, առուտուր չը կայ,
թանգութիւն է. միթէ այդ ամենը չը պիտի լի-
նի, երբ բոլոր ուրիշից են ստանում և սպա-
սում են, որ օտարի ձեռքով պատրաստած քո-
ռակով և արծաթով առնեն. միթէ ամօթ չէ միշտ
ուրիշից սպասել բոլորը և նրա քմահաճութեանը
ենթարկվել: Զիտ է, մենք էլ օտարին ծախում ենք
մեր երկրի հում ապրանքները, բայց դժբաղդաւոր
հում ապրանքի ծաղկեցնելը, աղուտացնելը և բազ-
մացնելը էլ չենք խմանում և կամայ-կամայ մո-
տենում է այդ բոլորի սպառումն և վախճանը:
Յանկալի է, որ ապագայ ուսումնական տար-

վայ չըլանում, իբրեւ առաջին փորձ, ըստ տե-
ղական ուսուցչաց ընտրութեան՝ մեր ուսում-
նարաններում աւանդվին տեխնիկական մի քա-
նի սկզբունքներ, որ գտնէ այն ժամանակը մեր
բողբոջների և կասկածանքների իրաւացի և անի-
րաւացի կողմերը երևան գան:
Ի դէպս միտս եկաւ մի կենդանի օրինակ:
Մի քանի տարի է, որ շարունակ Ռուսաստա-
նում լոյս է տեսնում մի ամենահեշտ, հասկանա-
լի և մեզ օգտակար արուեստ ուսուցանող ձեռ-
նարկ, որը ժամանակակից զանազան արհեստնե-
րից մաս-մաս վերցրած ունի: Գիրքը բաղկացած է
500 երեսներից, ձեռնարկի յետը աւելացրած է մի
ընդարձակ բառարան, որտեղ պարզ բացատրվում է
օտարազգի տեխնիկական անունները և նշանա-
կութիւնը, իսկ գրքի մէջ կան 119 պարզ մեքե-
նաների պատկերներ հանդերձ բանօրի գործո-
ղութեամբ: Այդ գրքի հետ ծանօթանալով մեր
տարրական ուսումնարանների ուսուցիչներին հա-
մար օգտակար է և միանգամայն դիւրամբնելի.
շատ ցանկալի է եթէ մեր մարդասէր հարուստները
հմտաւորին թարգմանիկ տալին հայերէն լեզուով:
Գրքի վերնագիրն է «Отвѣты на вопросы дѣтей,
какъ и изъ чего это дѣлается? Изъ области
техническихъ производствъ, изданіе шестое.
С.-Петербургъ, 1878 г. ц. 2 р. 50 к.: Այդ գիր-
քը մեծ յարգանքով է ընդունված վիեննայի աշ-
խարհահնդիսում 1873 թ.: Գիրքը, ամէն մի հում
առարկայի աղօթածիսական, բաղադրական յառ-
կութեանց և որպիսութեանց հետ ծանօթացնե-
լուց յետոյ՝ ապա անցնում է նրա մշակելուն և
տեխնիկորէն պատրաստելու մասին: Ռուսաց դա-
ւաւական թէ միջնակարգ և թէ տարրական ու-
սումնարաններում մեծ ընդունելութիւն է գտել
այդ գիրքը: Հեղինակը բողբոջում հետեւել է գե-
մանացի երեւելի տեխնիկ վ. Կարմարշին, որի
յառաջաբանը կարգալիս մարդս իմէ խորին ծերու-
թեան համար: Բայց դժբաղդաւոր մեղանում այդ
տեսակ գրքերը ընդունելութիւն չեն գտել և ան-
տես են արած:
Յուսալի է, որ եթէ մենք կը սիրենք տեխնի-
կական աշխարհը և նրա մէջ ապրելու, մեր կեն-
սական վիճակը այնուհետեւ կամայ-կամայ ապա-
հով դրութեան մէջ կընկնի:

Յ. Ամիրադեան

ԿԱԼՕՄԷԱՑԻ ԴՕՆԺՈՒԱՆԸ

—Այսպէս: Համբուրում եմ քո նաղելի կնոջ
պարանոցը, ծոծրակը և կուրծքը, ձեռքը սահն-
նում ես նրա քնքարը, լիքը մարմնի վրայով, փայ-
փայլում ես նրան, յանկարծ—սիրող գրաւականը
աղաղակում է: Կինս դուրս է թուշում անկողնից,
նոցաթափները հագնում է. և սկսում է յետ ու-
սումը ման դալ սենեակի մէջ և օրօրել մանու-
կին: Մինչև կէս գիշեր անդադար լուծ եմ ուն-
ում, վայ-վայ—և քնում եմ միայնակ: Այսպէս
անցնում է մի տարի: Մեր շուրջը կատարվում է
մի նշմարվում է: Ամէն ոք նկատում է այդ,
բայց ոչ որ հաստատապէս ասել չէ կարող, թէ
ինչ է: Պատահում ես շատ անձանոթ անձինքներ
ինչ լեզուական կալուածատէրները անգաղար ան-
ցաւորձ են անում յետ ու առաջ: Մէկը ձիւներ
է գնում, միւսը վառօղ: Գիշերը տեսնում ես
թիֆլի վրա մի կարմիր գու: Գիւղացիները խմը-
նում են պանդուխտ մօտ և միմանց հետ խօսում
են, թէ պատերազմ պէտք է լինի, կամ խռովու-
թիւն, և կամ խօսերա կը գայ: Սիրտը սկսում է
նոցաթափ ծանկարծ մի բան զարթնում է հողուղ
մէջ յիշում ես, որ դու հայրենիք ունես, թէ և նրա
աւանները, այնպէս խորին կերպով կարեկող,

ՆԱՄԱԿ ԱՆՈՒՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

Օգոստոսի 1-ին

Ամառային շրջանը սկսեցին հետզհետե սաստկանալ։ Արեգակը կարծես կրակ է թափում։ Հասարակական կյանքը երկուս է կրում տարաբնույթի հիւանդություններով, որ բարեխառնարար միջնակայում չը կան։ Այդիւր և մաշիւր անձրեւները ունեցան մեր ժողովրդի վրա փրկարար ազդեցութիւն։ Երանելի շատ լաւ դրութեան մէջ են, հոռւաբար խոտաւորում է առատ տրութիւն։ Արդէն դաշտերում հնձել են։ Այս տարւոյ ալ տառ հոռւաշատ քիչ ենք տեսած։ Տայ Աստուած, որ անվնաս լինի և լեռների հացը, որ այժմ դեռ կանանչ է։

Քաղաքումս առեւտուրը կանգնած է։ Ըստերը վաճառականներից զանգատում են գործ չը լինելուն համար։ Եթէ մի ակնարկ ձգենք տեղիս հասարակութեան վրա, կը պատկերանայ կեանքը շատ տխուր կերպարանով։ Երեւելի է, որ քաղաքը, որ գործի է առեւտրական յաջող պայմաններով, զուրկ է ներքին արդիւնաբերութիւնից, զուրկ է օտար վաճառականներից, վերջապէս զուրկ է կատարելագործված արհեստներից *)։ Իսկ զրանց հակառակ ունի իր մէջ բազմաթիւ վաճառականներ, որոնք իրանց ապրանքով, զրամազկում ու փր գործունէութեամբ—գարձաւ գանգատում են, ինչ որ չը կայ, առեւտուր չը կայ, վնաս ենք անում։ Ինչ զարմանք, քանի որ տեղիս վաճառականութիւնը հաւատաւ հիման վրա չէ—կարծիք չը կայ որ վաճառականները օգուտ չեն ստանում։ Պէտք է հասարակութիւնը ձգտում ունենայ արհեստների կատարելագործութեան, որովհետեւ ամեն մի ժողովրդի ճշմարիտ դարգանքը և յառաջդիմութիւնը կայանում է ուսման և արհեստի մէջ։ Վաճառականութիւնը օրիշ բան չէ, եթէ ոչ արհեստի արդիւնքը մի տեղ տեղափոխել և դրա համար ստանալ միջնորդի վարձ։

Հասկանալի է, որ մի փոքրիկ քաղաքի համար, որովհետեւ է մերը, անօրոյն է չափից դուրս ծախող ունենալ, երբ առնադներ և պահանջարկներ համեմատաբար քիչ են։ Եւ ասան այդ է գլխաւոր պատճառը առեւտրի սակաւութեան։

Տեղիս դարձողների աշակերտներին արձակուրդ է առած։ Բազմաթիւ մանուկներ անգործ պէտք է թափառեն մինչև դարձողների բացվելը։ Յանկալի է, որ տեղիս բարեմիտ հասարակութիւնը կատարէ մեր խնդրածը, որ մենք յայտնել էինք ներկայ թիւ (Մշակի) 80 համարում—այն է մասնադարան—ընթերցարանի հիմնադր։ Այդպիսի մի հիմնադրութեան անհրաժեշտութիւնը և օգտակարութիւնը անտրանալի է։

*) Թէ ինչ դրութեան են մեր այժման արհեստները և արհեստաւորները, մենք յայտնենք այդ մասին այս օրերս մի ընդարձակ յօդուած հրատարակել, որ լինելու է «Մեր այժման արհեստների դրութիւնը» վերնագրով։

Նամակ. թղթակ.

Ես, ինչպէս լինում էր այդ ամուսնութիւնից առաջ։ Թող ստատանան տանէ սիրոյ այդ գրաւականը։ Տեր Աստուած, ներէ իմ յանցանքը։

Ես խաչակնքեց երեսը, բարկացած կերպով թքեց և ապա շարունակեց.

—Ես սպանված արջի մորթը փռում եմ կնոջս մահաճակատի առջև։ Ինչ էք կարծում։—Ես ճշայն—կորիք դու էլ քո մորթի հետ, նա յիշեցնում է ինձ երեխայի երկվորը։—Մտածեցէք, ապա իմ արիւնը, վառված, դրանք օյինչ։ Որքան գործնական են այդ կնիկները, զարմանալի գործնական են։

—Թող տուեցէք մի բոսէ ընդմիջել ձեզ,—ես դիմեցի իմ խօսակցին,—դուք չառնեցիք ձեր կնոջը...

—Երեւեք, համարեա զայրացած կարեց նա իմ խօսքը և նրա պնդքը լայնացան։—Ես ասեցի նրան։ Բայց դիմեց, թէ ինչ պատասխանեց ինձ։

—Լաւ, ուրեմն ինչ հարկաւոր են այն ժամանակի որդիները։—Երեւելի է, որ անգամ մի անգամ անգամ...—ասա թէ ինչու դառնում ես կնոջ ստրուկ։ Յանկանում ես դաւաճանել նրան։—Ոչ։—Յանկանում ես ապրել ինչպէս կուսակցուն։—Գարձեալ ոչ։ Ի՞նչ ինչ է մնում քեզ անել, եթէ ոչ, թող տալ, որ նա ոտքի տակ առնէ քեզ։ Հաւատացէք, լինում էին այնպիսի բոսէներ, որ ես պատրաստ էի իմ երեխային... հասկացէք, ինչ եմ ասում... օրինակ, միանգամ պատահեց այնպիսի տեսարան։ Առաւօտեան ես

Յայտնի է, որ դիւղացու թշուառութեան և չքաւորութեան պատճառը շատ անգամ լինում է անհոգ չուայութիւնը։ Այս տարւոյ հոռւաբար չիցէ թէ այն հետեւեց անհոգ, որ դիւղացին մահաւաճում իր կրած հաղար ու մէկ տառապանքը նորէն հետեւի յիմար չուայութիւններին (որ դեմքը դարձաւ խոր արմատ է ձգել դիւղացու սրտի մէջ)։ Փափաքելի է, որ մեր դիւղական ուսուցիչները, մանաւանդ քահանաները յորդորեն չիտականներին որքան կարելի է հեռու մնալ անտեղի չուայութիւններից։ Մեղաւորում տղադրական խոտը չունի իր ազդեցութիւնը ժողովրդի վրա։ Յանկալի է, որ մեր հոգեւոր պաշտօնականները հոգ տան իրանց հօտի բարօրութեանը, խրատելով հեռու մնալ անհոգ և վնասակար չուայութիւններից։

Պօղոս Բէպարեան

ՆԵՐՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք կ. Պօղոսի արկին Արթուրի Տիւրքի հեղինակութիւնը «Մշակ» վերնագրով։ Գրքը ստված է ներկայ 1883 թւին, Զարդարանի տաղարկութեամբ։ Այդ գրքի մասին մենք կը խօսենք մի այլ անգամ։

Ներքինեան Հայոց-Աղգային-հոգեւոր դպրանոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ յայտնել որ դպրանոցում աշակերտների վերաբնութիւնը և նորեկների ընդունելութիւնն ու քննութիւնը քակուելու են օգոստոս ամսին 22-ից և տեւելու են մինչև 1 սեպտեմբերի, իսկ սեպտեմբերի 1-ին կը սկսվի դասատուութիւնը։

Ստացանք 21 բուրդ որ պէտք է հասցնենք Գիւրգենեանին, որպէս զի նա հասցնի Արիւն աւելաների իր ֆոտոգրաֆիական ժողովածուն արկին Արթուրի Նաղարովին։ Ես իմ քաղաքը։ Բայց որովհետեւ Գիւրգենեան թիֆլիսում չէ այժմ, այլ դեռ նա ճանապարհորդելու ժողովրդին, այդ պատճառով մենք պահում ենք փողը մեզ մօտ մինչև նրա վերադարձը, մանաւանդ որ խմբագրութեան մէջ չը կայ նրա ժողովածուներից։

Մեզ խնդրում են տպել հետեւեալը։ «Այն պարտններին, որոնց մօտ գտնվում են «Վիշապի» բաժանորդագրական թերթերը, խնդրում ենք ուղարկել մեզ թէ թերթերը և թէ փողերը, որովհետեւ մտադիր ենք «Վիշապը» շուտ տպագրութեանը յանձնել։ Մեր հասցին է. Типограф. Мос-ковская печатня Теръ-Ованесова (на Проспектѣ), Григорію Петросянцѣ, съ передачею Сандаль.»

Մենք առիթ ունեցանք տեսնել Թիֆլիսի բելգիական հիւպատոսի զեկուցումը բելգիական ար-

ծիւում էի իմ տաճկական երկայն ծխաբարձը, որը հենց դրա նման էր, միայն ունէր մափթուկից հիւսած կարկիւր։—Երեւելի է լինում, որ նրան ծխաբարձը։ Ինչքան ուղում է, թող աղաղակէ, մտածում եմ ինձ ու ինձ։ Բայց կինս արդէն տեսնալին դրութեան մէջ է։—Տուր նրան, ասում են քեզ, ծխաբարձը,—նա կարծում է, թէ չիբուկ է։ Ես տալիս եմ երեխային տաքացած ծխաբարձը, նա բռնում է և աւելի սաստիկ ըսելով է աղաղակել։—Աստուած իմ, ինչ՞ ծխաբարձը։—Ես վեր եմ առնում հրացանը, գնում եմ դաշտը, ցանկանալով կնոջս, որ ուրախ անցկացնէ ժամանակը։ Ես էլ, կարծես թէ, ուրախ էի, որ նա մնաց երեխայի հետ, որը ամբողջ օր պէտք է լաց լինէր։ Իմ բնաւորութիւնը զգալի կերպով փոխվում էր։ Ինչ պէտք է արած, բնաւորութիւնը ակամայ փոխվում է։ Այնուհետ, ինչ որ կարող եմ,—մտածեցէք, խնդրեմ,—օրինակ... Պատահեց ձեզ որ և ինչ ժամանակ, որ յանկարծ, առանց պատճառի, կանգնել ձեր ծոցի ժամացույցը։ Կամ պատի ժամացույցը։ Պատահեց է։—Սեղեք, դուք անհամբեր էք։

—Երբեմն։

—Լաւ։ Եւ այսպէս, դուք անհամբեր էք։ Գուրկանում էք, որ ժամացույցը իսկոյն սկսել բանել։ Դուք չարժում էք նրան, չարժում էք ճօճանակը, լաւ, սկսում է բանել, բայց երկար է տևում այդ։—Երկին կանգնում է, դուք միանգամ եւ չարժում էք ճօճանակը, բայց ժամացույցը դար-

տալին գործերի միջնորդին։ Գրքովը հետաքրքիր է իր թանջաններով, որոնք վերաբերում են Կովկասի և Անդրկովկասի աղաքնակութեանը, արդիւնաբերութեանը, վաճառականութեանը և այլն։ Գրքովը տպված է Բրիտանիայի, Փրանսիայի լեզուով։

Առհասարակ հասկացողութիւն է կազմված որ հայերը Անդրկովկասեան հարաւային և արեւելեան նահանգներում քիչ են թուով քան թէ թուրքերը։ Վերջին կառավարչական վիճակագրութիւնից յայտնվում է որ Երևանեան նահանգում, ընդհանրապէս, հայերը թուրքերից շատ են։ Հայերը 300,000 են, իսկ թուրքերը 212,000 են։ Եւրասիական նահանգում ճշմարիտ է հայերը թուրքերից փոքր են թուով, բայց այնքան մեծ չէ տարբերութիւնը։ Այդտեղ թուրքերը 350,000 են, իսկ հայերը 194,000 են։ Թիֆլիսի նահանգում հայերը 162,000 են, իսկ վրացիք 290,000 են։

Մենք ստացանք Վենեցիայի Միլիթարեան ուսումնական հրատերը, յուլիսի 20-ից դրված, որ և տպւում ենք։ Արդիւ տեսքը հայ-աղգայինը։ Հեռագրից և լրագրից արդէն փութացան գուժելու մեր սրբազան և ցանկալի Միլիթարեան Ս. Վաղարշ Վանուց սպալի պատահարը, ամենին անակալ և դեռ անձնաթի պատճառէ ծագած ճորդից, ի 2—14 ամսոյ յուլիսի, որ և բնական հանգամանքը այն օրուան տօթոյն և հոգմոյն և զիշխարային ժամուան, միանգամայն և հեռաւորութեամբ տեղեւոյն ի քաղաքէ և ի չիճացողաց, շուտով աճեցաւ, և կը սպաւնար փճացնել բոլոր շինուածն ալ (մէկ և կէս դարով հին և ոչ շատ ամբալազմ), եթէ բազմութիւն հրշիջոց անձանց և գործեաց չը հասնէին ի վերայ, որք և հինգ վեց ժամ աշխատելով յաջողեան խափանել մեծադոյն վնասն ու կորուստը, և ողորմութեամբ Աստուծոյ աղաւթը դիմե մասն չինուածոյ, հանդերձ մեր և աղբիս սիրելի և թանկ հնաւանդ գրովը և տպագրութիւնը և դիւանոց։ Աստուց աղաւթութեան համար միանգամայն հանդերձ մանկկայքը նորընծայիք՝ ամենայն ջանք բանեցողցին, թողլով իրենց պարկեշտ աննականներն՝ հանդերձ կահիւք և զղեսուղը ի ճարակ հրոյն, որ զրեւթէ զերրորդ մասն բնակարանացն այրեց ու արեց։ Միաբանութիւնս՝ նախ իր կենդանի և սիրելիագոյն աւանդները՝ դիմանումն յապաճողից խաւրով ի բնակութիւն ցամաք երկրի, և հիմայ օտարութեամբ ըստ կարեւորցն փութով զարմանել իր մեծ և ծանր վնասը, կը յոստայ այս կարեւոր և մեծ վերանորոգութեան նպատակ և օգնութիւնը զանկէ՝ բարեխիտայ ողորմութեամբ և առաւանձնութեամբ։ և նախ ի բնիկ աղգայնոց՝ քան յաւրանեաց, որք մեծաւոր ըլլալով պանդուխտ բնակութեանս՝ փութացան և կը փութան բանել և զրով յայտնել մեզ իրենց կարեւորութիւնը, ոչ միայն իրեն ծանօթից կամ վնասականաց, այլ դուք ասելի եւ իրեն արեւելեան նշանաւոր աղգի մը գիտական ներկայացուցցա՝ յօտար աշխար-

ձեալ կանգնում է, դուք սկսում էք համբերութիւնից դուրս գալ, չարժում էք աւելի սաստիկ կերպով—լուրդովին կանգնում է։ Մի և նոյն փորձն ես անում եմ աշխատում ես վերադարձնել քո սրտի կանոնաւորութիւնը,—կատարելապէս մի և նոյնը։ Ահա սիրում ես քո կնոջը և չես բաւականանում միայն հանդիստ անկողնով։ Հասկանում էք, զգում ես մի տեսակ ցաւի նըման բան, կըր սաստիկ փափաքում ունես զեպի կինը։ Բայց զրանից յետոյ բանը պոճած է։ Այդ ժամանակ միայն կը հասկանաս, որ դու աղաւթված ես,—և աւելի ոչինչ։ Կը հասկանաս, որ իսկապէս այդ ունայն է, որ կայ մի ուրիշ բան, բոլորովին ուրիշ բան, աւելի բարձր, թէ այդ և կինը աւելի գերազանց են, քան թէ զայլը և նրա էղբ։ Բայց այդ բոլորը ի դուր է։ Երեւելի է, որ կինը մի և նոյնն է, ինչ որ է մի գիրք։ Ես յօժարութեամբ կը կարդայի նրան մինչև վերջը, բայց ես ստիպված եմ միշտ նորից սկսել նրան։ Վերջապէս, ես փակում եմ նրան։ Թող մինչև վերջը կարդայ նա, ու որ կամենում է։ Այդպէս, հասկանում էք, ես միայն ցանկանում էի զրով իմ հոգեւոր։ Մեր մեծակայքում կանգնած էին գուտարներ։ Ես ծանօթացայ օֆիցերների հետ։ Ինչ մարդիկ էին։ Օրինակ, Բոսնէյ, ճանաչում էք նրան։

—Ոչ։

—Կամ բարոն Պօլը,—գարձեալ ոչ։ Բայց Բա-

նի իւրեանց, որով և իրենց զգացումն և վարկն մեծ մասամբ ալ կը վերաբերի առ պատական ազգս Հայոց, առ որ կը դիմեն այսու յայտարարութեամբ։ Մեր կողմանէ ի դիւրութիւն հափառը ձեռաց՝ կառավարիներ, փոխարինարար այս բարեարթութեան ընդունել մեր ապագայից զրոյն որ և է ուղածինը կիսով կամ կրկին գնով աւելի։ Իսկ կարողազունից կառավարիներ կամ բաղմաթիւ դիւր գնելը, կամ կանխիկ ընկերագրի որոշեալ գումարով մը՝ նաև վառ ապագայ տպագրեաց ինչուան 5 կամ 10 տարեաց միջոց, տարեկան ապագրեաց դիւն համարելով 50 Փրանկ մը։ Այս բանիս համար կրնայ ուղղուն խօսել և դաշնագրի կամ ուղղակի մեր վնասը հետ, և կամ ընդ վերակացուցայ գրաւաններին մերոյ ի վ. Պօլիս, ի Սիդրոս խան։ Օրհնութիւն Աստուծոյ ի վերայ աղբիս հայոց և տանս Միլիթարեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄԻՑԻՑ

Կ. Պօլիս, 31 յուլիսի

Առջի նամակով զրեցինք թէ՛ այն ուղիքը զոր խմբագրած էր Աղգ. ժողովը որպէս զի տրուի պատրիարք սրբազանին ճշգրիտ անպատշաճ գործէր։ Արդարեւ այդ ուղիքը պիտի ըլլայ բնական վնասակար միջ համար։ Այն խալ հակառակութիւնը որ կը տրել տանէ մը ի վեր Աղգ. ժողովի և պատրիարքի միջև, այդ հակառակութիւնը հետզհետե աւելի ճարակ կը գտնէ աճեցաւ։ Սեղ կը թողնուր դատել թէ ո՞րն է այժմ աղգին համար շահաւորը։ Աղգ. պաշտօնական մարմիններու մէջ համաձայնութիւն թէ՛ անհամաձայնութիւն։ Աղգ. ժողով և պատրիարք խոչընդոյցով կը դիման միմեանց թերութիւնները։ Եթէ պատրիարքը կը լաւ, Աղգ. ժողովը հակառակ ընթացքի կը հետեւի։ Ամեն նիստիս առիթ կը վնասուի վիրաւորութեան և դաժակէ՛ք ընել Ներսէս սրբաւանը։ Մենք մեր պարզամտութեան մէջ կերպովեց թէ պիտի վերադառնան 78—79 թուականներն յորում խահալան ողի կը տրել մեր մէջ և ամենքս միաբան էինք։ Ինչ վնաս տեսանք այն օրերէն որ այժմ եւրբ բոլորովին ատոր հակառակը կընենք։ Օտար թշնամիներն մեր վրայ կը հակեն և մենք կաշխատենք կործանել մեր սուրը, որ արդի զան կանգնում ալ չէ։ Յուսուք որով կը հաղորդեն և դուք մի անհուշալ դաւելով կը կարողաւ ամեն ատեն որ Աղգ. ժողով, պատրիարքը, Աղգ. վարչութիւն իրարու հետ գտնուեն։ Բայց ինչ ընենք, ինչ որ է զրելու է։ Այսօր կրկին պիտի հաղորդեն ցաւալի տեղեկութիւններ այդ ուղիքի առթիւ։ Գաւառի մասին նորանոր դուռներ բացուցան։ Վախճանը ինչ պիտի ըլլայ։ Ինձ այնպէս կուգայ որ Աղգ. ժողովը կամաւ ըրաւ այդ սխալը որպէս զի զրուէ պատրիարքը և կրիւր

չէք։ Ես գնում էի երբեմն մէկի, երբեմն միւրի մօտ, և նրանք համարեա ամեն օր այցելում էին ինձ։ Պատահում էր, որ նստած էինք լինում աս մօտաւոր շուրջը, ծխում էինք, մեղանից ամեն մէկը պատմում էր մի որ և ինչ անցք, յետոյ ըստ կտուէ կընէ թուղթ խաղալ։ Երբեմն միասին գնում էինք որսորդութեան։ Այդ ժամանակ ես սովորեցի գնալիւնարիկ ընկաններին։ Այնուհետեւ կը իմ կեանքի նոր եղանակը։ Միանգամ հանդիպելով կարգով նստում է իմ մօտ, սկսում է նկատողութիւններ անել։ Ես միայն ասեցի նրան. սիրելի ինչ ուրախութիւն է ինձ նստել տանը, լսում ես քո երեխան լաց է լինում։—Գուտարների միջանցում գալու ժամանակ Նիկիթեան հանգում է ի կանաչ կրկնոցը, պատած սկիւռի սպիտակ մօրթի հաշիւալով, սանրվում է մօղայի համեմատ զուրս է գալիս մեզ մօտ։ Ինձ ծիծաղելի էր թէ լուսն աղբի Երեւի, նա մտածել էր զրուել իմ խաւրդութիւնը։ Եւ պտոյտ էր գալիս հիւրերի շուրջը, համարներ էր անում և ամենեկին չէր նայում իմ վրա։ Իմ գուտարները, զիտեք, նախ, տաքում կայ չը կայ, որ աղնիւ տղամարդիկ էին, երբ լուրդ, ոչ որ նրանցից չէր կամենայ—և ինչ համար,—մեռնել իմ ձեռքից կամ վնասել ինչին, և դուք յաւիտանս լինել հաշմանդամ։ Ինչու համար։ Եթէ կնոջը չես սիրում, ուրեմն մի և նոյն չէ, այսպէս կամ այնպէս—և ինչ ինչ բանը սկսում են ջրաբացնել ինձ։—Փեղ ինչպէս է թուում, երբայր, չէ որ քո կինը սիրելի է

մեծնայ:—Անցեալ չորեքշաբթի օր պ. թիւրեան
քանակ: Ազգ. ժողովի ատենակազմը գնաց պատ-
րաք սրբազանի, ընկեր ունենալով իրեն հետ
Ազգ. ժողովի Բ. ատենակազմի պ. Գուրգէնը: Ի-
րաւ է որ պէտք էր պ. Չեքուր ստորագրէր այդ
ուղերձին ներքեւ, սակայն նա պատուական բռնե-
լով թէ՛ չէ կրնար թողուլ իշխանաց կողմի հո-
մատուն ատենը և հրատարակել իրենց միջ-
նակ, մէկը թաշուկացաւ: Պ. Գուրգէն ունէր ձեռքը
պարտք առնել մը: Նոր երեսփոխան, ինքն ալ իր
զորութիւնը պէտք էր ցոյց տար Ներսէս սրբա-
զանին, ուստի առանց վարանելու ստորագրեց:
Իսկ պ. թիւրեան, չեմ կարծիք որ համաժողով
կողմ ըլլար ուղերձի վերջի մասին, վասն զի պ.
ատենակազմը խոստովան մարդ է, սակայն քանի
որ ատենակազմը գտնուած է, պարտաւոր էր յար-
գել ժողովին որոշումները: Ուստի երկու պա-
րտնէրը ելած զէ, օր զայն Ներսէս սրբազանի:
Պատրիարքը քաղաքական ժողովին կը նախադա-
նէր, երբ կը լսէ պատգամաւորներուն դաւաճա-
րէի կողմէ կողմէ կողմէն ժողովին մօտ և հոս
կրնային Ազգ. ժողովի պատգամաւորները: Հա-
մաժողովը կը գրեմը եղած խօսակցութիւնը:
Պ. թիւրեան, կը յայտարարէ թէ՛ (ուղեր-
ձը մատուցանելով) «Ազգ. ժողովը ի պատասխա-
նի ձեր սրբազանութեան նախադասական ձառնի-
քով արեւմտ է սոյն ուղերձն զոր պատիւ ունիմ
ներկայացնելու»:
Սրբազան պատրիարքը:—(Ուղերձը ու-
ղադրութեամբ կարդալէ վերջ, թէպէտ լրագրութե-
ան մէջ առաջ կարդացած էր) «Միթէ սակարու-
թիւն է ուղերձին ալ պատասխան տալ»:
Պ. թիւրեան:—Սրբազան, դուք աւելի հին
երեսփոխան էք քան թէ ես: Ձեր սրբազանութիւնը
նախադաս է Ազգ. ժողովի, հետեւեալ ինձմէ ա-
ւելի լաւ գիտէք թէ՛ ուղերձին պատասխան տա-
լու է թէ ոչ»:
Շիտակը ըսելով մինչև հիմա այսպիսի ուղերձ,
կամ լաւ ևս յանդիմանալի չէր տրուած պատ-
րիարքին, ուստի պատասխանելու ալ հարկ չէր
եղած, անոր համար կը շփոթէին պատրիարքը և
ատենակազմը թէ պատասխանելու հարկ կայ թէ
ոչ:
Պատրիարք սրբազանը կըսէ «Շատ չնոր-
հալաւ եմ և գոհ որ Ազգ. ժողովը կը ձայնակցի
ինձ աչն միջովանայ համար զոր ըրած եմ վասն
կենաց վեհախառ կայսեր: Իսկ զայն ուղերձի
մէջ նշանակուած սա տողերուն համար թէ՛ «վա-
րկիւ օտմ. հովանաւորութեան ներքեւ այն բարե-
նորոգումներու արդիւնքը զոր օգոստ. սուրբանը
անհրաժեշտ կը դառն իր երկրին և հպատակին-
րուն բողոքականաւորութեան զարգացումը»:
այս տողերուն համար շատ ուրախ եմ, վասն զի
այսպէսով Ազգ. ժողովը կողմէ իր անցեալ տա-
րի գործած սխալը և կը սրբազան իր որոշումը:
Պ. թիւրեան:—Սրբազան, Ազգ. ժողովը
ինչ սխալ գործած է որ ուղերձ, ինչ որոշում
տուած է որ սրբազան: Եւ որ ինչորոշ մէջ:
Պատրիարք սրբազանը:—Հայկական

ինչորոշ առթիւ իր գործած սխալին համար
ըսել կուզեմ: Իսկ զայն իմ ապիկարութեանս
կէտին, այդ ես ապիկար եմ, անկարող եմ, իմ
վրաս բնաւ յոյս մի գնեք: Ես կը յայտարարեմ
ի ներկայութեան աստ գտնուող եկեղեցական
հայրերուն թէ՛ ես կարող չը պիտի ըլլամ իրա-
կանացին ազգին յոյսերը:
Պ. թիւրեան:—Սրբազան, ինչ պատճառ-
ներ կան որ ձեր սրբազանութիւնը կը դատապար-
տուի ապիկարութեանս:
Պատրիարք սրբազանը:—Պատճառ մը չը
կայ, պատճառը պարզապէս իմ ապիկարութեանս
և անկարողութեանս է: Տարբ տարի ի վեր է որ
սրբազանութիւնը կընեմ և ալ ես զոյգուած եմ,
վերջապէս ես չեմ կրնար իրականացնել ձեր յոյ-
սերը:
Պ. թիւրեան:—Եթէ կամը կարող էք
իրականացնել զանոնք, զիարդելը եղող պատճառ
մը չը կայ:
Պատրիարք սրբազանը:—Կան և շատ
կան. նիւթական պատճառներ, բարոյական պատ-
ճառներ, յարաբերական և այլն, և այլն:
Պ. թիւրեան:—Սրբազան հայր, մենք
այսօր ներկայացանք պաշտօնական կերպով և
ինչ որ ըսէք մեզ պիտի ընդունին իր պաշտո-
նական յայտարարութիւններ ձեր սրբազանութեան
կողմէ, և զանոնք պարտաւոր ենք հազարիկ ըստ
առ բառ Ազգ. ժողովին:
Պատրիարք սրբազանը:—Ես ալ զայն
պիտի ընդունիմ: Ինչ որ աստ ձեզ յայտնե-
ցի, հաճեցէք իմացնել զանոնք Ազգ. ժողովին: Բ-
նէք Ազգ. ժողովին թէ՛ ես չը պիտի կրնամ ի-
րականացնել իր յոյսերը, և ինչորոշ այն օրը
միտնի երջանիկ պիտի համարեմ, յորում Ազգ. ժո-
ղովը վճռէ իմ անկումս:
Այս վերջին խօսքերը նախաժողովին կը համա-
րի Պ. թիւրեան, ուստի այլ ևս չուրի մօտիկ
ընել և մինչ պատրիարքը դուր կը խօսէր, պ.
թիւրեանն ոտքի կը կենդանու համար: Մեկ-
նա՛ստ պահու կը հարցնէ պ. թիւրեանին պատ-
րիարքին թէ ներկայ պիտի գտնուի Ազգ. ժողովին
առաջին շաբաթ: Պատրիարքն ալ զորոշումով
կը հարցնէ «միթէ կրնամ ներկայ գտնուիլ»:
«Անշուշտ պիտի գաք» կըսէ պ. թիւրեան, և
կը մնին:
Ինչ հարկ այս տեսակցութեան վրայ երկար
լազատութիւններ տալ: Վասն անկարողութեան
ներ, մէքեր իրարու տալ, ահա դործը:—Պ. թի-
րեանն անշուշտ, ինչպէս իր պարտքն ալ է
պիտի հազարիկ այս տեսակցութեան Ազգ. ժողո-
վին, օգոստ. 5-ի գումարակցութեան ժողովի մէջ: Ալ
Աստուած գիտէ թէ ժողովը տաք զլուսն ան-
դաւնելու ինչորոշ պիտի ընեն: Այս ընթացքը ա-
ղէկ ընթացք չէ, Աստուած վերջերինս բարին
ընէ:
—
Կաթողիկոսական Գանձաժոյղին ալ այժմ կե-
րկայ: Կամ բոլորովին պիտի լուծուի Ազգ. ժո-
ղովի կողմէն, կամ շատ պիտի սահմանափակուի

իր իշխանութիւնը: Երբ ընտրուեցաւ այս Գանձ-
աժոյղը, զիտէր որ տան և մէկ քուէով ըն-
դունուեցաւ լիազօր Գանձաժոյղով մը սկզբուն-
քը, այդ ժամանակէն հակառակ են շատերը այդ
Գանձաժոյղին: Սակայն քանի որ Ազգ. ժողովը
ընտրեց զայդ, պէտք էր որ յարկէր զայն, բայց
այս ալ ընելու համար քիչ շատ առողջ միտք
պէտք էր: Հիմա տեսակ տեսակ են այդ Գանձա-
ժոյղի հակառակորդները: Մաս մը կայ որ չը
կրնար հանդուրժիլ լուս մնալ այսպիսի կարեւոր
ինչորոշ մը մէջ: Խօսելու պահին իսկ առթիւ, ինչ-
որ ինչորոշ Ազգ. ժողովը վիճարկութեան առ-
նէ: Ուրիշ մաս մը կայ, և ասիկայ շատերն են,
որ վստահութիւն չունին Գանձաժոյղովի վրայ և
կը կարծեն որ Գանձաժոյղովը ծախուած է օտա-
րին: Ալ չեմ գիտեր թէ իրաւ ունին ասանկ կաս-
կած թէ կը ձեռնեն: Բայց եթէ իրաւ ունին
այս կասկածը, քիչ շատ տարբերակ է: Ազգ. ժո-
ղովը երբ ընտրեց այդ Գանձաժոյղովը շատ ազա-
տութեամբ ընտրեց: Ոչ միտակ երեսփոխանե-
րու մէջէն առաւ այդ Գանձաժոյղովը անդամները,
այլ նաեւ երեսփոխան յանդիմանելու, Պօլսն գտնե-
վող ամեն հայրերն: Այդ կարելի չէ եղած որ
Պօլսոյ հայոց մէջ չորս հինգ հոգի գտնուէին ո-
րոշ մտքին և սրտին վրայ հաւատարմապէս վրա-
տա՛ս ըլլայ Ազգ. ժողովը:—Ասկէ զատ միթէ այժ-
մու անդամները վստահելի անձներ չեն: Մենք
կը կարծենք թէ պատճառ մը չը կայ կասկածե-
լու Ներսէս սրբազանի, Սերգիւնի, Խորհրդան
պիկարութեան և այլոց վրայ: Ինչ և է այժմ ամ-
բաստանութիւններ, զրպարտութիւններն սկսած
են տարածուիլ:
Իրաւ է որ Գանձաժոյղովի գործերը, որոշում-
ները զաղանի կը մնան, բայց շատ բաներ ալ
կրնան իմացուիլ:—Իմացուածներուն մէջ հետեւեալն
է կարծեմ որ շատ անախտօք եղած է երեսփոխա-
նաց: Գանձաժոյղովը որոշած է փոփոխել կաթո-
ղիկոսի ընտրութեան եղանակը: Փոխանակ Գե-
որգ կաթողիկոսի ընտրութեան եղանակը ի գործ
դնելու, Գանձաժոյղովը կորույն որ Հայոց կաթո-
ղիկոսը ընտրուի քանի և մէկ քուէով: Այդ քուէ-
ները պէտք է բաժնուին հետեւեալ կերպով. 12
քուէ թիւրեան հայոց, 6 քուէ Ռուսիոյ հայոց,
3 քուէ մնացած տեղերու հայրերուն:—Եթէ քան
և մէկ քուէ ալ չըլլայ, բայց համամասնութիւնը
այսպէս է, սակայն քան և մէկ ըլլալ բաւական
ապահով է: Պատգամաւորը կը ժողովին էլ միա-
միտ և կը կատարեն ընտրութիւնը: Այս առա-
ջարկուած եղանակաւ ընտրութեան մէջ թէպէտ
միմաստնութիւնը թիւրբոյ հայոց է, սակայն
փորձառականութիւն մը անոնցմէ միանալու որ ը-
լայ միմաստնութեան հետ, այն ատեն թիւրբոյ հայերը
իւրեց գերիշխանութիւնը կորուսած կըլլան:—
Գանձաժոյղովի այս որոշումը մեր Ազգ. ժողովի
հեղինակութիւնը կը սղակուի ընտրութիւնը փո-
խանակ ուղղակի ընելու անուղղակի ըրած կըլլայ
և հաւանորէն ուղած դերը չը կրնար խաղալ: Ազգ.
ժողովի անդամներն շատերը զանազան կարեւոր

գիտողութիւններ կրնան այս եղանակ ընտրու-
թեան մը անպատշաճութիւններուն նկատմամբ:
Կը փոփոխելն այդ կարեւոր գիտողութիւններն
հազարիկ ձեզ ես, բայց չենք կրնար ընել զանա-
զան պատճառներով:—Օտար ազդեցութիւն բառը
շատ կը յեղեկին:
Այժմ ինչպէս պիտի ընէ Ազգ. ժողովը որ լու-
ծէ կամ տկարացնէ իր Գանձաժոյղովը:—Ազգ.
ժողովը այժմ կուզէ որ Գանձաժոյղովը առանձին
չը գործէ, այլ ինչպէս որ առաջուց որոշուած էր,
գործէ Փաղաքական և Կրօնական ժողովներուն
հետ: Այդ Փաղ. և Կրօնական ժողովները լազ-
կացած են 14-ական անդամներէ, ըսել է 28 ան-
դամ, ութն ալ ասոնք կրնէ երեսուն և վեց: Այդ
36 անդամով լիազօր Գանձաժոյղով մը կը դա-
տապարտուի ոչինչ ընելու:—Ասկէ զատ փոխա-
նակ 36 անդամի մէջ գործ տեսնելու, նոյն կըլլար
եթէ Ազգ. ժողովը մէջ գործ տեսնուէր, զի հոն ալ
50 հոգիէն աւելի չեն գար:—Հիմա եթէ լիազօր
Գանձաժոյղովը չուզէ գործել Փաղ. և Կրօնական
ժողովներուն հետ, Ազգ. ժողովը պիտի պահանջէ
որ լիազօր Գանձաժոյղովը զաղի լիազօր ըլլալէ,
այլ ըլլայ տեղեկաբեր յանձնաժողովի այսինքն
ինչ որոշում որ տայ զայն ներկայացնել Ազգ. ժո-
ղովին, անոր վիճարկութեանը նմարել և Ազգ.
ժողովը ինչ որոշում որ տայ այն գործադրուի:—
Տեսնենք, ունինք բաւական պատերազմներ Ազգ.
ժողովի մէջ: Երանի թէ ամեն բան տախտիկայ
չընէին: Իսկ կրտսի նաեւ թէ Գանձաժոյղովը իր
գործը ընցուցած ըլլալով, իր տեղեկագիրը պի-
տի ներկայացնել շուտով Ազգ. ժողովին, և ասով
զօտարտութիւնները պիտի վերցնէ: Չենք կարծիք
որ վերնան:

Հայկական

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԵՆՑ
ՆԻՃՆԻ-ՆՈՎԱԳՐՈՂ, 9 օգոստոսի: Մարտիկ
ապրանքների առևտուրը լաւ է գնում և
բարձր գներով: Միւսի մարթիկները ծախ-
ված են արտասահման 30—34 րուբլ զգրդ:
Կատուի մարթիկները բոլորն էլ անցեալ տար-
վայ գներով են ծախված: Կուղրի մարթի-
կները շատ են բերված, բայց գները բարձր
են և այդ պատճառով առնողները չեն
շտապում: Ձմային ապրանքների առևտու-
րը հանդարտ է և բարձր գները օգոստոսի
15-ից առաջ չեն որոշվի:
ԲԵՐԼԻՆ, 9 օգոստոսի: Մեծ իշխան Մի-
խայիլ Նիկոլայեվիչ, հասնելով այստեղ Շվե-
րինից, այսօր այցելեց կայսր Վիլհելմին և
ընտանեկան ճաշից յետոյ Պատգամի մէջ
ուղեւորվեցաւ Ս. Պետերբուրգ: Սպանիական
թաղաւորը սեպտեմբերի վերջին կայցելէ
կայսր Վիլհելմին և ներկայ կը լինի գեր-
մանական զօրքերի մեծ զօրախաղին:

(Կը շարունակվի)

ՖԻՐՄԻՆԻ, 9 օգոստոսի: Կոմս Շամբոր
մեք ի մահ է: Երեկ նա մեծ թափա-
սեց իր ազգականներին և բարեկամներին:

ԼՕՆԴՈՆ, 10 օգոստոսի: Կոմսի գեղի
վրա նախագահություն մասին գաղափարը
ստորագրեցին Կոմսի անունից կոմիտեի անդամները,
բացի թիւթաքից և մի
այլ ներկայացուցիչ, որ յայտնի չէ, թէ որ
պետությունից է:

ԿԱՅԻՆ, 10 օգոստոսի: Վերջին օրերի
ընթացքում խորհրդային մեծան կայրերի մէջ
1 և նահանգների մէջ 193 հոգի:

ՋԱԲԵԲ, 10 օգոստոսի: Քաղաքային
վարչությունը և քաղաքացիների մասնաժո-
ղովը յայտնեցին, որ նրանք պատասխանա-
տու և լինեն կարգապահության համար,
եթե պետական շինությունների նշանակնե-
րի վրա զրուածները խորվատական լեզուով
և լինեն: Խորվատական լրագրները խաղաղ
են գրում:

ՓԱՐԻՋ, 10 օգոստոսի: Այսօր սկսվեցան
գլխավոր խորհուրդների նիստերը:

ԼՕՆԴՈՆ, 10 օգոստոսի: Լորդերի ժողովը
մերժեց օրինագիծը Շալանդիայի գործերի
համար առանձին միսիստություն հիմնե-
լու մասին:

ԲԵՐԼԻՆ, 10 օգոստոսի: Պաշտօնական
„Nord. Deut. Allg. Zeitung.“ լրագի-
րը, մասնաժողով անելով Ֆրանսիական մա-
մուլի յարձակմունքների վրա Գերմանիայի
դէմ, ֆրանսիային միակ պետություն է ա-
նուանում, որ սպառնում է եւրոպական
խաղաղությունը:

ԼՕՆԴՈՆ, 10 օգոստոսի: Ֆրանսիացիները
վերջին Գանիօնը, իրանց ձեռքը գցելով
150 լանգսօվներ և 50,000 դոլար: Ա-
նամացիները յետ քաշվեցան երկրի խորքը:

Խմբագիր—Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒՐԻՇ ՏԵՂԻՑ 25% ԷԺԱՆ

ցիտրատ-մանգանգի, կաֆէ աղացներ,
ուլթոններ, մահալաներ, կարբոնային փոշի
տարափոխիկ հիւսնագուններ, դէմ, կի-
տակ, դանակներ և պատառաքաններ,
շէֆտակներ, զրիններ, ԹԷՑ 1-ին հուն-
ձի: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ
ՄԷՁ:

10—10

ՊԱՍՏԱՌ (օբյ) ՏԱՐՆՈՊՈԼ Եղբայրների գոր- ծարանական ՊԱՆԵՍՏԻ մէջ:

Լօրիս-Մէլբուրնի փողոց, ա.
Ջուբալովի, հոգեւոր սեմինարիայի
հանդէպ:

Ստացված է մեծ քանակությամբ
ՊԱՍՏԱՌ (օբյ) 12 կոպէկից
մինչև 5 րուբլ ԲՈՒԼՕ:

Քանակությամբ գնողներին ԶԻ-
ՋՈՒՄՆ կը լինի:

8—25

ՓԹԵԱՄԲ ԿԱՐԱՎԱՐՈՒՄ ՏԵՂԻՑ

Նախկին իտալական և հասարակ մեթոդայով
ՀԱՅՈՑ ԿԱՐ ՌՈՒՍԱՑ Լեզուներով
ԵՐԵՎԱՆԵԱՆ 7 ժամից յետոյ ԶԱ-
ՓԱՌՐ ԲՈՒՄԻՈՎ: Հասցէս Ջուբալովի
քաղաքային, Գասպարեանցի մագաղանում:
Նոյնպէս սովորեցնում են աշակերտներին
ամեն ժամանակ:

Սմբատ Գետատարեանց

„ԱՂԲԻՒՐ“

Կէս տարվայ բաժանորդագրութիւնը չարու-
նակվում է:

Կէս տարվայ բաժանորդները կը ստանան
նաև № № 4—6, որովհետև Հարֆիլդի կեն-
սագրութիւնը, որ շարունակվում է հետեւել
համարներում էլ, սկսում է տպագրուել
№ 4-ից:

Կէս տարվայ բաժանորդները 2 րուբլի է:
Պարտում «Աղբիւր» կարելի է ստորագրուել
«Բուրաստան Մանկանց» հանդիսի խմբա-
գրատանը:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՋՈՒԹԻՒՆԸ
խնդրում է հիւրանոցների, կերակուրների
խանութների և խմաններ պահողներին
Թիֆլիսում շնորհ բերել առաւօտեան 10
ժամին քաղաքային դուռնայի դահլիճը ա-
ռաջիններին ներկայ տարվայ սեպտեմբերի
5-ին, իսկ վերջիններին 7-ին իրանցից պատ-
գամաւորներ ընտրելու համար, որոնք հիւ-
րանոցների կանօնադրութեան 22 և 56 յո-
դուածներին համեմատ պէտք է օրոշեն
ակցիզը հետեւեալ չորսամեակի համար:

1—3

ԳԱԼԵՐԵԱ ԱՐԾՐՈՒՆԻ ԴՎՈՐՑՈՎԱՅԱ ՓՈՂՈՑ

ՊԱՆԵՍՏ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.

СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են մեծ քանակությամբ և խիստ էփան, Վիեննայի ԹՕՆԷԹ Ֆար-
բիկայի ՄԷԲԷԼԻ ամեն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵՅՈՎ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ Հայելիների հա-
մար և ՀԱՅԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ Թուղթ, Բէլգիայի ԱՊԱԿԻ-
ՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՐՄԱՐԻՈՆ քար, ԹՈՒ-
ՋԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ Էմպոյով ՆիթրաՍ ԳԱՐԺԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ:

ԲԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԲԱԺՆՈՎ

Գնալաւտ 0. Կ. ՄԻՐԵՑԿՈՒ, որ Նիկոլայեվսկի ինժեներների ուսումնարանի
ուսուցիչ է: Ս. Պետերբուրգ, Ստրեմանայա փողոց, ա. 16 (Կուրչա):

Բէալական ուսումնարանը 7 դաստիարակներով ունի կառավարչական բէալա-
կան ուսումնարանների պրոգրամ: Ներկայ մայիսին քննութիւն տուող բոլոր աշա-
կերտները վկայականներ ստացան, որոնք հաւասար են կառավարչական վկայա-
կաններին:

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԲԱԺՆԸ պատրաստում է քաղաքային և զինուորական բոլոր
ուսումնարանները մանկու համար, օրինակ. Կայսերական Ալեքսանդրեան լիցէյ
և իրաւաբանական ուսումնարանը, առեւտրական ուսումնարանը, կադետսկի կոր-
պուս և զինապետներ, նոյնպէս քննութիւն տալու համար կադետների կորպու-
սի ամբողջ կուրսի վկայական ստանալու նպատակով: Այդ քննութիւնների հե-
տեւեքը 1881—2 թ. ուսումնական տարվայ համար հետեւեալն է: Կադետների
կորպուսի 7-դ դասատան վկայական ստանալու համար քննութիւնների թիւը 50 էր,
որոնցից հինգը Միլեցկու ուսումնարանից: Քննութիւնը աջողութեամբ տուին
և վկայականներ ստացան ընդամենը վեց հոգի, որոնցից 2ՈՐՍԸ Միլեցկու ու-
սումնարանից էին: Բացի այդ նոյն ուսումնարանից վերաքննութեամբ 5 հոգի
մտան Նիկոլայեվսկի ինժեներների ուսումնարանը: Մնացած աշակերտները մտան
Նիկոլայեվսկի կադետների կորպուս և Կայսերական Ալեքսանդրեան լիցէյ:

ՈՒՍՈՒՄՆԸ ԿԸ ՍԿՍՎԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ին:

1—2

Սեպտ. 1-ին երևանում բացուելու է

ԼԵՒՈՆ ԹԻՒՍԻԿԱՆՑԻ մասնաւոր պրոգրամագիտան:


Պայմանները կարելի է իմանալ հիմնարկողից ամեն օր երևանում, Թաթևանովսկի
փողոցում, Մելեքովի տանը: Օտարաքաղաքացիք ուղարկելով հիմնարկողին մի 7 կօպ,
փոշտի մարկա կը ստանան պրոգրամագիտայի տպած կանօնադրութիւնը:

6—10

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍ-
ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց
ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադար-
ձնող: Գինը 2 ր. շերտ, ՓՈՍՏԱ-
ՑՈՎ ուղարկված 2 ր. 49 կօպ.
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՑԻ
ԻԿՂ, մազերը ամրացնող հա-
մար, 1 ր. ամանը և վրձին գլխա-
ցաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏ Ի ՍԱ-
ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն:
32—100



ՄԱՆՈՒՖԱԿՏՈՐԱՑԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ջ Ի Ն Գ Ե Ր

Ն Ի Ւ Ի Օ Ր Կ Ի Մ Է Ջ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՁ:

Ծախվում է ամենալաւ համարված կարեմքեւաններ նպաստող նոր գործիքներով և նոր պատուանդաններով, որոնք
պահպանում են փշանայուց, գործելու ժամանակ աղմուկ չեն հանում և թիթե ընթացք ունեն աշխատանքի ժամա-
նակ, այնպէս որ ամենաթոյլ և ծեր մարդիկ կարող են նրանց կառավարել առանց ոյժերը սպառելու: Ծախվում է

ԿԷՍ ՄԻԼԻՈՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱԻԵԼԻ ՏԱՐՎԱՑ ԸՆԹԱՑԳՈՒՄ:

Այս իրողութիւնը ամենալաւ ապացոյց է Ձինգերի կարեմքեւանների համար:

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ. Ձինգերի իսկական կարեմքեւանները մեծ վարկ ունեն, որովհետև իրանց գեղեցիկ յատկութիւններով ամենքին գնալիցնում են և այդ պատ-
ճառով ուրիշ գործարանները նրանց կեղծում են և ծախում են Ձինգերի իսկական կարեմքեւանների տեղ: Զգուշացնում են ձեռք, որ Ձինգերի իսկական իւրաքան-
չիւր կարեմքեւան The Singer Manufacturing Co-՝ Ֆիլադելֆիայի ունի գործարանի գրօշման մեքենայի կօթի և մամուլի վրա. The Singer Manufacturing Co-՝

Գ. Ն. Ե. Յ. Դ. Լ. Ի. Ն. Գ. Ե. Բ. Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս. Գ. Օ. Լ. Օ. Վ. Ի. Ն. Ս. Կ. Ի. Փ. Ո. Լ. Ո. Ց. Տ. Ո. Ի. Ն. Մ. Ի. Բ. Ի. Մ. Ա. Ն. Օ. Վ. Ի.

ԲԱԺՈՒՄԻ մէջ Պոլցեյսկայա փողոց, տուն Թերզի-Օղլի:

ԳՈՒԹԱՑԻՍԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Շնէյդերի:

ԲԱԳՈՒԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Միրզա-Աւազովի:

Խրաքանչիւրին միջոց տալու համար ձեռք բերել Ձինգերի ամենաօգտակար և իսկական կարեմքեւան կարելի է գնել փոքր մուտքերով, այսինքն շաքաթական
1 ր. 50 կ. վճարելով առանց իսկական գինը բարձրացնելու: Հնացած մեքենաները խանութը փոփոխում է:

13—50 (1)